

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԱԿԱՆ ԻՆՖՐԱՍՏՐԱԿՏՐԱ ԿՈՄՊԼԵԿՍԻ  
ՍՊԵՏԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ

ԲԱԼԱՆՍԻ ԿՐԻՏԻՍ

Ստորագրող կազմակերպությունը  
Ստորագրող կազմակերպության անվանումը և հասցեն  
Ստորագրող անձի անունը և հասցեն  
Ստորագրող անձի պաշտոնը և կազմակերպության հասցեն

**«ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՍՏՈՑԱՇԻՆԱԿԱՆ  
ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ**

**Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**2022թ. դեկտեմբերի 31**





## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Չարենցավանի հաստոցաշինական գործարան» բաց բաժնետիրական ընկերության ղեկավարությանը և բաժնետերերին:

### Չևափոխված կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Մեր կարծիքով, բացառությամբ «Կարծիքի ձևափոխման հիմքեր» սխեմայով նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա նրա գործունեության արդյունքներն ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

### Կարծիքի ձևափոխման հիմքեր

- Մենք հաստատվել ենք որպես Ընկերության աուդիտորներ 2023թ. օգոստոսի 15-ին և հետևաբար չենք հետևել Ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների փաստացի գույքագրմանը: Ընկերության պաշարները 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված են համապատասխանաբար՝ 344,593 հազար դրամ և 511,204 հազար դրամ գումարներով՝ համաձայն պաշարների արժեքի նվազեցումը՝ 109,495 հազար դրամ: Մեզ չի ներկայացվել ֆինանսական հաշվետվություններում հաշվարկված պաշարների արժեքի նվազեցման անալիտիկ բացվածքները (ցուցակները) և արժեքի նվազեցման հաշվարկները: Պաշարների հաստատման համար մենք անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որպեսզի ինքներս համոզվեինք Ընկերության պաշարների մնացորդի ճշմարիտ լինելու վերաբերյալ 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Արդյունքում, մենք անկարող էինք որոշել՝ արդյոք անհրաժեշտ են ճշգրտումներ «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ-ի

Crowe and Asatryan LLC  
 "Dorn Moxley" Business Center,  
 7, Argishti str., 2nd floor,  
 Yerevan, 0015, Armenia  
 T. +(374) 60 53 23 23  
 +(374) 99 54 33 00  
 E-mail: general@crowe.am  
 general@asatryan.com  
 www.crowe.com  
 www.asatryan.com

Քրոու և Գևորգյան ԲԲԸ  
 "Դոն Մոսլեյ" Բիզնես կենտրոն,  
 Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,  
 Երևան, 0015, ՀՀ  
 Հ. +(374) 60 53 23 23  
 +(374) 99 54 33 00  
 Է-մեյլ: general@crowe.am  
 general@asatryan.com  
 www.crowe.com  
 www.asatryan.com

Member of Crowe Global | A global network of independent accounting firms  
 Քրոու Գլոբալի անդամ | Անկախ հաշվապահական ընկերությունների գլոբալ անդամ



ակտիվներում «Պաշարներ» հողվածում, ինչպես նաև կուտակված շահույթում/(վնասում) և դրամական հոսքերի մասին հաշվետվությունների տարրերի հետ:

Մենք աուդիտը անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտներով սահմանված մեր պարտականությունները ներկայացված են «Աուդիտորի պարտականությունները ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ» հատվածում: Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՎՄՍԽ) կողմից հաստատված «Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի» (ՊՀՎ կարգ) համաձայն մենք պահպանել ենք մեր անկախությունը Ընկերության նկատմամբ և սրահպանել ենք էթիկայի այլ սկզբունքների նկատմամբ մեր պարտականությունները համաձայն այդ ստանդարտների և ՀՎՄՍԽ Վարքագրի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### **Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվորականության գործընթացի վերահսկման համար:

### **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, քայքայն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խեղամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և սրահպանում մասնագիտական քերականավատություն: Ի՝ լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման շնորհիվ ղեկավարման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական

Member of Crowe Global | A global network of independent accounting firms

Քրոու Գլոբալի անդամ | Անկախ հաշվապահական ընկերությունների գլոբալ անդամ



խնդարյունման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարոյախոյությունը կարող է ներառել հանցավոր համաձայնութիւն, գեղծարարութիւն, միտումնաւոր քացքոյումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողութեան համակարգի չարաշահում:

- Չնոք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողութեան համակարգի մասին պատկերացում տվյալ համագամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու , և ոչ թէ ԸՆԿերութեան ներքին հսկողութեան համակարգի արդյունավետութեան վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականութեան տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարութեան կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող քացահայտումների հիմնավորվածութիւնը:
- Եզրահանգում ենք ղեկավարութեան կողմից հաշվապահական հաշվառման արճնդհատութեան հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացոյցների վրա՝ գնահատում ենք , թէ արդէր առկա է էական անորոշութիւն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել ԸՆԿերութեան անընդհատ գործելու կարողութեան նկատմամբ: Եթէ մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշութիւն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացութիւնում ուշադրութիւն հրավիրել ֆինանսական հաշվետվութիւնների համապատասխան քացահայտումներին, կամ, երբ այդպիսի քացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացութիւնը: Մեր եզրահանգումները հիմնված են միմիչև մեր աուդիտորական եզրակացութեան ամսարիվը ձեռք բերված աուդիտորական ապացոյցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ԸՆԿերութեանը դադարեցնել գործունեութեան անընդհատութեան հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվութիւնների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակութիւնը, ներառյալ քացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվութիւնների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կատարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պահանջարկը շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էջանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողութեան համակարգին վերաբերող նշանակալի թերութիւնների մասին:

Մենք կատարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարութիւն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախութեան վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց անդեկացում ենք բոլոր հարաբերութիւնների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ներազդութեան, կարող են անդրադառնալմեր անկախութեան վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Նախագրան օգակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համապատասխան են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությանը կամ կրթական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բարձրից հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմանը պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է, ղեկավարը Ալեքսեյ Ասատրյանն է:

Մի սեպտեմբերի 2023թ.

Ալեքսեյ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,  
առաջադրանքի պատասխանատու

Քրու ընդ Ասատրյանս ՍՊԸ  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն





## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին	2021թ. դեկտեմբերի 31-ին
Ծնք.	ավարտված տարի	ավարտված տարի
Հանախորդների հետ պայմանագրերից հասույթ	4 523,362	422,254
Եկամուտ շնորհներից	4 99,421	113,795
Վաճառքի ինքնարժեք	5 (579,188)	(539,798)
Համախառն շահույթ	43,595	(3,749)
Վարչական ծախսեր	6 (230,686)	(133,876)
Գործառնական գործունեությունից վնաս	(187,091)	(137,625)
Պահուստներ	7 (20,816)	-
Այլ եկամուտ/(ծախս)	8 8,975	(11,684)
Ֆինանսական ծախս	9 (22,063)	(21,684)
Այլ ֆինանսական հոդվածներ	10 29,461	3,417
Տարվա վնաս	(191,534)	(167,576)
Շահութահարկի գծով փոխհատուցում	11 3,712	3,600
Տարվա վնաս	(187,822)	(163,976)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնաս	17	
Բազային	(2,098)	(1,832)
Նորագված	(2,098)	(1,832)
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</b>		
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	(187,822)	(163,976)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից

մարտի 21-ին:



Չարնեցավանի  
 գործադիր տնօրենի  
 Ստաննա Գաբրիելյանի  
 ստորագրությունը

Ստաննա Գաբրիելյան  
 Գլխավոր հաշվապահ

Ստաննա Գաբրիելյանի  
 ստորագրությունը

Ֆինանսական հաշվետվությունների պատկերացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծճք.		
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	12	2,343,030	2,330,595
Ոչ նյութական ակտիվներ		374	17
Հետաձգված հարկային ակտիվ	13	3,762	50
		<b>2,347,166</b>	<b>2,330,662</b>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	14	511,204	344,593
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	881,907	8,765
Դրամական միջոցներ և համարժեքներ	16	1,202	88
		<b>1,394,313</b>	<b>353,446</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>3,741,479</b>	<b>2,684,108</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<i>Կապիտալ և պահուստներ</i>	17		
Բաժնետիրական կապիտալ		89,515	89,515
Լրացուցիչ կապիտալ		87,080	87,080
Վերագնահատման պահուստ		1,921,369	2,017,856
Կուտակված վնաս		(207,750)	(116,416)
		<b>1,890,214</b>	<b>2,078,035</b>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	18	-	101,123
Հետաձգված եկամուտ	19	225,758	109,783
		<b>225,758</b>	<b>210,905</b>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	18	183,000	95,686
Հետաձգված եկամուտ	19	100,919	192,295
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20	1,320,686	90,031
Պահուստներ	7	20,902	17,155
		<b>1,625,507</b>	<b>395,167</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>1,851,265</b>	<b>606,073</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>3,741,479</b>	<b>2,684,107</b>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բամբարձի- րական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Վերագնա- հատման պահուստ	Կուտակված շահույր/ (վնաս)	Ընդամենը
2021 թ. հունվարի 1-ի դրությամբ (Վերահաշվարկված)	89,515	87,080	2,114,444	(49,027)	2,242,012
Տարվա շահույր/(վնաս)	-	-	-	(163,976)	(163,976)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	(163,976)	(163,976)
Վերականգնողական պահուստի իրացում՝ շահույրահարկի ազդեցությունը հաշվի առած	-	-	(96,588)	96,588	-
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	89,515	87,080	2,017,856	(116,416)	2,078,035
Տարվա շահույր/(վնաս)	-	-	-	(187,822)	(187,822)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	(187,822)	(187,822)
Վերականգնողական պահուստի իրացում՝ շահույրահարկի ազդեցությունը հաշվի առած	-	-	(96,487)	96,487	-
2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	89,515	87,080	1,921,369	(207,750)	1,890,213

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթությունների հետ մեկտեղ:

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Տարվա վնաս	(187,822)	(163,976)
<i>Ճշգրտումներ՝</i>		
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(3,712)	(3,600)
Մաշվածություն	113,051	112,510
Ֆինանսական ծախս	22,063	21,684
Պահուստների փոփոխություն	3,747	7,900
Ընտրեցներից եկամուտ	(99,421)	(113,795)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(29,461)	(3,417)
<b>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</b>	<b>(181,555)</b>	<b>(142,695)</b>
Անտրային և այլ դերիտորական պարտքերի փոփոխություն	(873,142)	69,882
Պաշարների փոփոխություն	(166,611)	39,431
Անտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	1,230,655	27,249
Այլ պարտավորություններում փոփոխություններ	-	(138,284)
<b>Գործառնական գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ</b>	<b>9,347</b>	<b>(144,417)</b>
Վնասված տոկոսներ	(5,186)	(7,220)
Վնասված շահութահարկ	-	(450)
<b>Գործառնական գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ</b>	<b>4,161</b>	<b>(152,087)</b>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վնասված միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,788)	(17,234)
Ներդրումային գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ	(1,788)	(17,234)
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	-	117,000
Մուտքեր վարկեր և փոխառություններ	(30,686)	(79,318)
Ընտրեցներից մուտքեր	-	699
<b>Ֆինանսական գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ</b>	<b>(30,686)</b>	<b>38,381</b>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ ան/(նվազում)	(28,313)	(130,940)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	29,426	3,417
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեկան դրությամբ</b>	<b>88</b>	<b>127,611</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեկան դրությամբ	1,202	88

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների շտաբագրի մասը կազմող 9-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ժամկետագրությունների հետ մեկտեղ:



## Ֆինանսական ծանոթագրություններ

## հաշվետվություններին

կից

### 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Չարենցավանի հաստոցաշինական գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») ստեղծվել է 29 ապրիլի 1996թ.: Ընկերությունը հանդիսանում է «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ՊԾ և «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ՓԲԸ իրավահաջորդը:

Ընկերությունը իրականացնում է գործունեության հետևյալ տեսակները՝

- Մետաղյա իրերի և կիսաֆաբրիկատների արտադրություն
- Ռազմական տեխնիկայի և սպառազինության վերանորոգում և արդիականացում
- Նախագծային աշխատանքների կատարում
- Առևտրամիջնորդական գործունեություն և այլն

«Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ-ն շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 89,515 հատ հասարակ բաժնեմասերից՝ մեկ հազար դրամ անվանական արժեքով: «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ-ի բաժնետերերի կազմը ներկայացված է ծանոթագրություն 16-ում: Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում ՀՀ պաշտպանության մախարաբությունը (ՀՀ ՊՆ):

Ընկերությունը իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Ք. Չարենցավան, Սասյան վող., 2:

2022թ. ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 139 մարդ (2021թ.՝ 146 մարդ):

### 2 Պատրաստման հիմքերը

#### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

#### 2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

Ընկերությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պատրաստելիս կիրառել է հետևյալ մոտեցումները.

- չեն ճանաչել հողվածները որպես ակտիվ կամ պարտավորություն, եթե ՖՀՄՍ-ով բույլ չի տրվում այդպիսի ճանաչում,
- ճանաչել է այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնց ճանաչումը պահանջվում է ՖՀՄՍ-ով.

ՖՀՄՍ-ն կիրառվել է բոլոր ճանաչված ակտիվները և պարտավորությունները շափելիս:



**2.3 Գործառնական և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

**2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում**

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաքվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և քարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն:

**2.5 Նոր և փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք ուժի մեջ են մտնում ընթացիկ տարվա համար**

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաքվի դրությամբ Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշակի ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը բողարկվել է, բայց դեռ ուժի մեջ չի մտել:

<b>ՖՀՄՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր</b>	<b>Նշված ամսաքվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար</b>	<b>Կիրառելիությունը</b>
Կոմիսիոն վճարները Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման "10 տոկոս"-ի բնատուժ (ՖՀՄՍ 9-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսեր (ՀՀՄՍ 37-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Հիմնական միջոցներ. Մուտքեր մինչև նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Դուստր կազմակերպությունը որպես առաջին անգամ որդեգրող (ՖՀՄՍ 1-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Հարկումը իրական արժեքի չափման մեջ (ՀՀՄՍ 41-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված
Թարմացումներ Հայեցակարգային հիմունքներին հղումում (ՖՀՄՍ 3-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2022թ.	Ընդունված

**ՖՀՄՍ 9. "Ֆինանսական գործիքներ" - Կոմիսիոն վճարները Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման "10 տոկոս"-ի բնատուժ**

Փոփոխությունը պարզաբանում է կոմիսիոն վճարները, որոնք Ընկերությունը ներառում է՝ գնահատելիս՝ արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները էապես



տարբերվում են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, ներառյալ փոխառուի կամ փոխատուի կողմից մյուսի անունից/օգտին վճարված կամ ստացված վճարները: ՀՀՄՍ 39. «Ֆինանսական գործիքներ, ճանաչումը և չափումը» ստանդարտի համար նման փոփոխություն չի առաջարկվում:

Անցումային դրույքների համաձայն՝ Ընկերությունը կիրառում է փոփոխությունը ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխվել են տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, երբ Ընկերությունն առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվը):

*Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսեր - ՀՀՄՍ 37-ի փոփոխություն*

Անբարենպաստ պայմանագիրը պայմանագիր է, որով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները (այսինքն՝ այն ծախսումները, որոնցից Ընկերությունը չի կարող խուսափել, քանի որ ունի այդ պայմանագիրը) գերազանցում են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները:

Փոփոխությունները սահմանում են, որ երբ գնահատվում է արդյոք պայմանագիրը անբարենպաստ է կամ ոչ շահութաբեր, Ընկերությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ուղղակի ծախսումները (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և նյութերի ծախսումները) և պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված վերադիր ծախսերը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածություն, պայմանագրի կատարման և վերահսկողության ծախսեր): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում, եթե դրանք հստակ ենթակա չեն վճարման կոնտրագենտի կողմից՝ համաձայն պայմանագրի:

*Հիմնական միջոցներ, Մուտքեր մինչև նախատեսված օգտագործումը - ՀՀՄՍ 16-ի փոփոխություն*

Փոփոխություններն արգելում են հիմնական միջոցների միավորի արժեքից հանել մինչև այդ ակտիվի օգտագործման համար հասանելի լինելը արտադրված նմուշների վաճառքից ստացված ցանկացած հասույք, այսինքն՝ հասույքը՝ մինչև ակտիվը համապատասխան վայր հասցնելը և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը: Հետևաբար, Ընկերությունը ճանաչում է նման վաճառքից հասույքը և դրա հետ կապված ծախսերը շահույթում կամ վնասում: Ընկերությունը չափում է այդ նմուշների արժեքը՝ համաձայն ՀՀՄՍ 2. «Պաշարներ» ստանդարտի:

Փոփոխությունները նաև պարզաբանում են, թե ինչ է նշանակում «ակտիվի անխափան աշխատանքի տեստավորում»: ՀՀՄՍ 16-ն այժմ սահմանում է սա որպես գնահատում, թե արդյոք ակտիվի տեխնիկական և ֆիզիկական արդյունավետությունն այնպիսին է, որ այն կարող է օգտագործվել ապրանքների կամ ծառայությունների արտադրության կամ մատակարարման, այլոց վարձակալության կամ վարչական նպատակների համար:

Եթե համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում առանձին չի ներկայացվում, ապա ֆինանսական հաշվետվությունները պետք է բացահայտեն շահույթում կամ վնասում ներառված հասույթի և ծախսերի գումարները, որոնք վերաբերում են արտադրված նմուշներին, որոնք Ընկերություն սովորական գործունեության արդյունք չեն, և թե համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որ հարված(ներ)ն է(են) ներառում այդպիսի հասույքներ և ծախսեր:

*ՀՀՄՍ 1. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը» - Դուստր կազմակերպությունը որպես առաջին անգամ որդեգրող*

Փոփոխությունը բույլ է տալիս դուստր կազմակերպությանը, որն ընտրում է կիրառել ՀՀՄՍ 1-ի Դ.16(ա) պարագրաֆը՝ չափելու վերահաշվարկման կոտակային տարբերությունները՝



օգտագործելով մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարները՝ հիմնվելով մայր կազմակերպության ՖՀՄՄ-ին անցնելու ամսաքվի վրա, երե ճշգրտումներ չեն կատարվել համախմբման ընթացակարգերի նպատակով և այն քիզնեսի միավորման արդյունքները հաշվի առնելու նպատակով, որի արդյունքում մայր կազմակերպությունը ձեռք է բերել դուստր կազմակերպությունը: Այս փոփոխությունը նաև կիրառվում է ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության մկատմամբ, որն ընտրում է կիրառել ՖՀՄՄ 1-ի Դ16(ա) պարագրաֆը:

**ՀՀՄՄ 41. "Գյուղատնտեսություն" – Հարկումը իրական արժեքի չափման մեջ**

Այս փոփոխությանը չեղարկվում է ՀՀՄՄ 41-ի 22-րդ պարագրաֆի պահանջը, ըստ որի՝ կազմակերպությունները չեն ներառում հարկերի վճարման համար դրամական միջոցների հոսքերը, երբ չափում են ակտիվների իրական արժեքը ՀՀՄՄ 41-ի շրջանակներում:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չունի ակտիվներ ՀՀՄՄ 41-ի շրջանակներում հաշվետու ամսաքվի դրությամբ:

**Թարմացումներ Հայեցակարգային հիմունքներին հղումում - ՖՀՄՄ 3-ի փոփոխություն**

Փոփոխությունները բարձրացնում են ՖՀՄՄ 3-ը, այնպես որ այն հղում անի 2018թ. Հայեցակարգային հիմունքներին 1989թ. հիմունքներին փոխարեն: Դրանք նաև ՖՀՄՄ 3-ում ավելացնում են պահանջ, ըստ որի՝ ՀՀՄՄ 37. "Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ" ստանդարտի շրջանակում ընդգրկված պարտավորությունների համար ձեռք բերող կիրառում է ՀՀՄՄ 37-ը՝ որոշելու, քն արդյոք ձեռքբերման ամսաքվին ներկա պարտավորություն գոյություն ունի անցյալ դեպքերի արդյունք: Այն պարտադիր վճարների համար, որոնք գտնվում են ՖՀՄՄՎ 21 Պարտադիր վճարներ մեկնաբանության շրջանակում, ձեռքբերողը կիրառում է ՖՀՄՄՎ 21-ը՝ որոշելու համար, քն արդյոք այն պարտավորեցնող իրադարձությունը, որն առաջացնում է պարտադիր վճարը վճարելու պարտավորություն, տեղի է ունեցել մինչև ձեռքբերման ամսաքվի:

Ընկերության դեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր և վերանայված ՖՀՄՄ ստանդարտներ, որոնք հրապարակված են, քայք դեռևս ուժի մեջ չեն մտել:

Մույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաքվի դրությամբ Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՄ ստանդարտները, որոնք բողարկվել են, քայք դեռ ուժի մեջ չեն:

	Նշված ամսաքվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
<b>ՖՀՄՄ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր</b>		
Փոփոխություններ ՖՀՄՄ 10-ում. "Համախմբված ֆինանսական հաշվետվություններ" և ՀՀՄՄ 28. "Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում" - Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում	Դեռևս չի սահմանվել ՖՀՄՄ խորհրդի կողմից	-
Փոփոխություններ ՀՀՄՄ 1-ում. "Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում" Պարտավորությունների դասակարգումը ըմբացիկի և ոչ ըմբացիկի	1 Հունվարի, 2024թ.	Հնտըմբաց



Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. "Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում" և ՖՀՄՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության քաղաքականություններ	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. "Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ" Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. "Շահութահարկեր" Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
ՖՀՄՍ 17. "Ապահովագրության պայմանագրեր"	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց

*Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում. "Համախմբված ֆինանսական հաշվետվություններ" և ՀՀՄՍ 28. "Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում" - Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում*

ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի փոփոխությունները վերաբերում են իրավիճակներին, երբ ներդրողի և նրա ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև կա ակտիվների վաճառք կամ ներդրում: Մասնավորապես, փոփոխությունները նշում են, որ դուստր կազմակերպության նկատմամբ (որը բիզնես չէ) վերահսկողության կորստից առաջացող օգուտները կամ վնասները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության հետ գործարքում, ճանաչվում են մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն այդ ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով: Նմանապես, ցանկացած նախկին դուստր կազմակերպությունում (որը դարձել է ասոցիացված կամ համատեղ ձեռնարկում, որը հաշվառվում է սեփական կապիտալի մեթոդով) սրահայանված ներդրումների իրական արժեքով վերաչափումից առաջացած օգուտները և վնասները ճանաչվում են նախկին մայր կազմակերպության շահույթում կամ վնասում միայն նոր ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում չկապակցված ներդրողների բաժնեմասերի չափով:

*Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. "Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում" Գարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի*

ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները, որոնք հրապարակվել են 2020թ. հունվարին, ազդում են միայն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պարավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա, և ոչ ակտիվի, պարտավորության, եկամտի կամ ծախսի ճանաչման գումարի կամ ժամկետի կամ դրանց մասին քաղաքականությամբ տեղեկատվության վրա:

Փոփոխությունները պարզաբանում են, որ պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ հիմնված է այն իրավունքների վրա, որոնք գոյություն ունեն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, նշում են, որ դասակարգման վրա չեն ազդում այն ակնկալիքները, թե արդյոք կազմակերպությունը կկիրառի իր՝ պարտավորության մարումը հետաձգելու իրավունքը, բացատրում են, որ իրավունքները գոյություն ունեն, եթե կովենանտները կատարված են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և տալիս են մարման սահմանումը՝ հստակեցնելով, որ մարումը վերաբերում է դրամական միջոցների, բաժնային գործիքների, այլ ակտիվների ծառայությունների փոխանցմանը կոնտրագենտին:

*Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. "Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում" և ՖՀՄՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության քաղաքականություններ*

Փոփոխությունները փոխում են ՀՀՄՍ 1-ի պահանջները՝ կապված հաշվապահական հաշվառման քաղաքականության քաղաքականության հետ: Փոփոխությունները փոխարինում են "Նշանակալի հաշվապահական հաշվառման քաղաքականություն" տերմինի բոլոր կիրառումները "հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվություն" տերմինով: Հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը էական է, եթե, երբ



դիտարկվում է կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ներառված այլ տեղեկատվության հետ միասին, որի ամսադրամերի ակնկալվում է, որ այն կազմի ընդհանուր նպատակի ֆինանսական հաշվետվությունների հիմնական օգտագործողների կողմից այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացված որոշումների վրա:

ՀՀՄՍ 1-ի օժանդակ պարագրաֆները նույնպես վավերվել են՝ պարզաբանելու համար, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը, որը վերաբերում է ոչ էական գործարքներին, այլ իրադարձություններին կամ պայմաններին, էական չէ և բացահայտման կարիք չունի: Հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվությունը կարող է էական լինել պայմանավորված գործարքների, այլ իրադարձությունների կամ պայմանների բնույթով, նույնիսկ երբ գումարները էական չեն: Այնուամենայնիվ, հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ էական գործարքներին, այլ իրադարձություններին կամ պայմաններին վերաբերող ոչ բոլոր տեղեկություններն են ինքնին էական:

ՀՀՄՍ 1-ն նաև նշակել է ուղեցույցներ և օրինակներ՝ ՖՀՄՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2-ում նկարագրված «չորս քայլ էականության գործընթացի» կիրառումը բացատրելու և ցուցադրելու համար:

*Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»*  
*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում*

Փոփոխությունները փոխարինում են հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխության սահմանումը հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանմամբ: Ըստ նոր սահմանման, հաշվապահական հաշվառման գնահատումները, ֆինանսական հաշվետվություններում ներկայացված դրամական գումարներ են, որոնք ենթակա են չափման անորոշության:

*Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. «Շահութահարկեր» Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր*

Փոփոխությունները նախատեսում են ևս մեկ բացառություն սկզբնական ճանաչման ազատումից: Ըստ փոփոխությունների, կազմակերպությունը չի կիրառում սկզբնական ճանաչումից ազատումը այն գործարքների համար, որոնք առաջացնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Կախված կիրառելի հարկային օրենսդրությունից, հարկվող և նվազեցվող հավասար ժամանակավոր տարբերություններ կարող են առաջանալ ակտիվի և պարտավորության սկզբնական ճանաչման ժամանակ մի գործարքում, որը բխում է միավորում չէ և չի ազդում ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա: Օրինակ, դա կարող է առաջանալ վարձակալության գծով պարտավորության և համասարտասխան օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճանաչման ժամանակ՝ կիրառելով ՖՀՄՍ 16-ր վարձակալության մեկնարկի ամսաբալի դրությամբ:

ՀՀՄՍ 12-ի փոփոխություններից հետո կազմակերպությունից պահանջվում է ճանաչել համասարտասխան հետաձգված հարկային ակտիվը և պարտավորությունը, ընդ որում ցանկացած հետաձգված հարկային ակտիվի ճանաչումը ենթակա է ՀՀՄՍ 12-ի փոփոխություններից չափանիշներին:

*ՖՀՄՍ 17. «Ապահովագրության պայմանագրեր»*

ՖՀՄՍ 17-ը սահմանում է ապահովագրական պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և փոխարինում է ՖՀՄՍ 4 Ապահովագրության Պայմանագրեր ստանդարտին:

ՖՀՄՍ 17-ը տալիս է ընդհանուր մոդել (որը փոփոխված է ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար), որը նկարագրված է որպես փոփոխական վճարի մոտեցում: Ընդհանուր մոդելը պարզեցվում է, երբ որոշակի չափանիշները բավարարվում են՝ չափելով մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը՝ կիրառելով ապահովագրական վճարների բաշխման մոտեցումը:

Ընդհանուր մոդելը օգտագործում է ընթացիկ ենթադրություններ ապագա դրամական միջոցների հոսքերի գումարը, ժամկետները և անորոշությունը գնահատելու համար, և այն հստակորեն չափում





3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտաբժույք

*Արտաբժույքով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույքով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտաբժույքով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտաբժույքով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտաբժույքով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտաբժույքով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

Արժույք	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	393.57	480.14
Եվրո	420.06	542.61

Արտաբժույքով գործարքներից, ինչպես նաև արտաբժույքով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային քաղաղորիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.2 Հիմնական միջոցներ

*Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը քաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր քաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ



ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, կառուցվածքներ և փոխանցվող հարմարանքներ	1-20 տարի
Մեքենա-սարքավորումներ	1-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Արտադրատնտեսական գույք և այլ	1-5 տարի

### 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի:

### 3.4 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով ԱՄԱԵ մեթոդը (Առաջինը մուտք առաջինը ելք), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

### 3.5 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը մասն և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իրենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոխառուցման դիմաց:

#### Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Ընկերությունը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձեռք ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

#### Օգտագործման իրավունքի ձեռք ակտիվներ

Ընկերությունը օգտագործման իրավունքի ձեռք ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն՝ այն ամսարվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձեռք ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վարաչափումից: Օգտագործման իրավունքի ձեռք ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական



ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, համաձայն վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնությունների կամ զեղչեր:

Այն դեպքում, երբ վարձակալած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Ընկերությանը կամ սկզբնական արժեքը արտացոլում է տվյալ վարձակալած ակտիվի գնման օպցիոն, ապա մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: գտագործման իրավունքի ձևով ակտիվները մույնպես պետք է արժեզրկման ստուգման (քեյթ) ենթարկվեն:

#### **Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով**

Վարձակալության սկսման պահին, Ընկերությունը կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով չափում է վարձակալության ժամանակահատվածի ընթացքում կատարված կամ կատարվելիք վարձավճարների իրական արժեքով: Վարձավճարները ներառում են՝ հաստատում՝ ֆիքսված վճարները (ներառյալ հաստատում վճարումները), համաձայն վարձակալության հետ կապված ցանկացած ստացվելիք խրախուսումներ, վարձակալության փոփոխում վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը և գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության վճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Փոփոխում վարձավճարները, որոնք կախված չեն որևէ ինդեքսից կամ տոկոսադրույքներից (ներառում են, օրինակ՝ վճարումներ՝ կապված սպառողական զեների ինդեքսից, վճարումներ՝ կապված ուղեճաշին տոկոսադրույքից (ինչպես օրինակ՝ LIBOR-ը), ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, որում այդ դեպքերը տեղի են ունեցել:

Վարձավճարների իրական արժեքը հաշվարկելիս, Ընկերությունը կիրառում է քսացուցիչ փոխառության տոկոսադրույքը վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ, որովհետև վարձակալության պայմանագրի մեջ ենթադրյալ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշվել: Վարձակալության սկսելուց հետո կրեդիտորական պարտքերը վարձակալության գծով ավելանում են (աճում են) տոկոսների ավելացումով պայմանավորված, և նվազում են վարձավճարների վճարումով: Բացի դրանից, կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով հողվածի հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե առկա է ձևափոխություն, փոփոխություն, փոփոխություն վարձակալության ժամանակահատվածում, փոփոխություն վարձավճարում կամ տվյալ ակտիվի ձեռք բերման օպցիոնի գնահատման փոփոխություն:

#### **3.6 Ֆինանսական գործիքներ**

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Ընկերության ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ընկերության բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:



Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ բողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ սրակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

**Ֆինանսական ակտիվների դասակարգումը**

- Ֆինանսական ակտիվներ անորոշիվացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉԸՎ)

**Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը**

- Ֆինանսական պարտավորություններ անորոշիվացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

**Ֆինանսական ակտիվներ անորոշիվացված արժեքով չափվող**

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են անորոշիվացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

**Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)**

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ասպիտակել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

**Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉԸՎ)**

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնստիճեյան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉԸՎ):



### **Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող**

Րոյոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը կամ ԻԱՉԸՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և ԸՆԿերության կողմից, բողարկված ֆինանսական երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

### **Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉԸՎ) ներկայացվող**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉԸՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉԸՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող երև.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավճանառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդնտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը ԸՆԿերությունը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:
- Այն ամանցյալ գործիք է, բացառությամբ այն ամանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախուհիված արդյունավետ հեջավորման գործիքներից:

### **Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը**

ԸՆԿերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Երև ԸՆԿերությունը ոչ փոխանցում է, և ոչ էլ սրահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Խումբը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Երև ԸՆԿերությունը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա ԸՆԿերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉԸՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, քաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ընտրել է ԻԱՉԸՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:



### **Ֆինանսական պարտավորությունների ապահանջումը**

Ընկերությունը ապահանջում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Ընկերությունը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապահանջված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Ընկերությունը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Ընկերությունը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

### **Ֆինանսական գործիքների արժեզրկում**

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամբողջագրված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Ընկերությունը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: «Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊԱԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին բարձրացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Ընկերությունը միշտ ճանաչում է ԴՊԱԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար նշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Ընկերության պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապահների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Ընկերությունը ճանաչում է ԴՊԱԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Խումբը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊԱԿ-ի համարժեք գումարով:

ԴՊԱԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊԱԿ-ն



իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԳՊՄԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառագանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև նկատի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 22-ում:

### 3.7 Արժեզրկում

#### *Հինանսական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում*

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ զննից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Նրե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կոյուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կոյուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

*Երբ հետագայում արժեզրկումից կոյուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես նկատուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:*

#### *Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ շափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, զննահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեռված դրամական միջոցների ակնկալվող սպագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կոյուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային



ղեկավարական պարտքերի, ոլորնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, երև հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օրյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, սակայն նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն անորոշագույն արժեքը, որը կլինեք, երև այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաքվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլինեք:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեքորբերին, արժեզրկումից հետո իրական արժեքի ան ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

### 3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից բողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Ըահարածիները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

### 3.9 Ըահուքահարկ

Ընթացիկ շահուքահարկը տարվա համար հարկվող շահույքից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաքվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաշահիերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահուքահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային քազանների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, երբ ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույքի, ոչ էլ՝ հարկվող շահույքի վրա (քացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույքի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:



Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա քավարար հարկվող շահույթ, որը բայց կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

### 3.10 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռքբերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

### 3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և երբ հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Երբ դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գնդման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տեղոսադրույքը, որն արտացոլում է դրանի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:



### 3.12 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով ԸՆԿերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարը, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

#### *Մարքավորումների վաճառք*

Դետալների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ բոլոր սրայնանները.

- ԸՆԿերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,
- ԸՆԿերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ՝ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն ԸՆԿերություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները:

#### *Մարտագինության և ռազմական տեխնիկայի վերամոդդում*

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն ԸՆԿերություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափելիաշվետու ամսաքվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համարկատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:



4 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույք

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառայությունների մատուցում	495,988	368,744
Պատրաստի արտադրանքի վաճառք	27,375	53,510
	523,362	422,254

Ընկերությունը Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից անհատույց օգտագործման նպատակով ստացել է 99,421 հազար դրամի գույք:

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույքը տրոհված

Հազար դրամ	Ծառայությունների մատուցում	Պատրաստի արտադրանքի վաճառք	Ընդամենը
	Հայաստան	Հայաստան	
2022թ.			
Սեզմննտի հասույք՝ ընդհանուր	495,988	27,375	523,362
Միջսեզմննտային վաճառքներից հասույք	-	-	-
Սեզմննտի հասույք՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	495,988	27,375	523,362
Հասույքի ճանաչման ժամանակացույց			
- Ժամանակի կոնկրետ պահին	495,988	27,375	523,362
- Ժամանակի ընթացքում	-	-	-
	495,988	27,375	523,362

Հազար դրամ	Ծառայությունների մատուցում	Պատրաստի արտադրանքի վաճառք	Ընդամենը
	Հայաստան	Հայաստան	
2021թ.			
Սեզմննտի հասույք՝ ընդհանուր	368,744	53,510	422,254
Միջսեզմննտային վաճառքներից հասույք	-	-	-
Սեզմննտի հասույք՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	368,744	53,510	422,254
Հասույքի ճանաչման ժամանակացույց			
- Ժամանակի կոնկրետ պահին	368,744	53,510	422,254
- Ժամանակի ընթացքում	-	-	-
	368,744	53,510	422,254

Պայմանագրի մնացորդներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. հունվարի 1-ի դրությամբ
Ղեկավարական պարտքեր՝ ներառված «Առևտրային և այլ ղեկավարական պարտքերում»	67,873	303



5 Ինքնարժեք

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցների հատուցումներ	283,900	281,694
Մաշվածություն	20,257	112,511
Գործուղման ծախսեր	21,187	25,115
Պաշարներ	211,518	92,397
Էլեկտրաէներգիա	34,294	12,448
Մասնագիտական ծառայություններ	-	7,199
Վատելիք	8,033	8,434
	<b>579,188</b>	<b>539,798</b>

6 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցների հատուցումներ	110,382	109,781
Մաշվածություն	88,727	-
Գործուղման ծախսեր	6,877	9,830
Կոմունալ ծախսեր	14,547	3,299
Չփոխհատուցվող հարկեր	-	3,174
Պաշարներ	8,102	3,371
Մասնագիտական ծառայություններ	-	2,100
Վատելիք	2,051	2,322
	<b>230,868</b>	<b>133,876</b>

7 Պահուստներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ոչ ընթացիկ
Պահուստներ չարունակական գործառնական ծախսումների գծով	20,902	-	17,155	-

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ավելացում	Հակադարձում	Ավելացում	Հակադարձում
Չօգտագործված արձակուրդային պահուստ	17,155	20,816	17,070	20,902
	<b>17,155</b>	<b>20,816</b>	<b>17,070</b>	<b>20,902</b>

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ավելացում	Հակադարձում	Ավելացում	Հակադարձում
Չօգտագործված արձակուրդային պահուստ	9,255	13,350	5,449	17,155
	<b>9,255</b>	<b>13,350</b>	<b>5,449</b>	<b>17,155</b>



8 Այլ եկամուտ/ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Այլ եկամուտներ</i>		
Գործառնական այլ եկամուտներ	42,030	7,002
	42,030	7,002
<i>Այլ ծախսեր</i>		
Այլ ծախսեր	(53,871)	(18,686)
	(53,871)	(18,686)
	(11,841)	(11,684)

9 Ֆինանսական եկամուտ/ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի (վերահաշ- վարկված)
Վարկերի և փոխառությունների գծով տոկոսներ	(5,186)	(7,220)
Փոխառություններն իրական արժեքով ներկայացնելուց առաջացած ծախս	(16,877)	(14,463)
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	(22,063)	(21,684)
Ջուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	(22,063)	(21,684)

10 Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ դասակարգված՝ որպես վաճառքի համար մատչելի</i>		
Փոխարժեքային տարբերություններից օգուտ/(վնաս). Փոխարժեքային տարբերություններից օգուտ	34,467	3,518
Դրամական միջոցներ և համարժեքներ	34,467	3,518
Փոխարժեքային տարբերություններից վնաս		
Դրամական միջոցներ և համարժեքներ	(5,006)	(100)
	(5,006)	(100)
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս).	29,461	3,417



11 Ծախուրահարկի գծով ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ունրացիկ հարկ	-	(425)
Հետաձգված հարկ	3,712	4,026
	<b>3,712</b>	<b>3,600</b>

Արդյունավետ հարկային դրույրաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույրաչափ (%)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույրաչափ (%)
Ծախույր/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	(191,533)		(167,576)	
Ծախուրահարկ՝ 18% դրույրաչափով (2021թ. 18%)	(34,476)	18.0	(30,164)	18.0
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	30,876	(16.1)	26,564	(15.9)
Ծախուրահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(3,600)	1.9	(3,600)	2.2



12 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հոդանա- սեր	Ընդեր- շինո- րյուններ	Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ	Ստանդարտային միջոցներ	Մեքենա- սարքավո- րուներ և տրանսպորտային միջոցներ	Անավարտ արտադրություն	Արտարա- տնական գույք և այլ	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>								
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	34,199	1,771,599	108,892	412,260	1,094,366	8,212	3,429,528	
Ավելացում	-	-	-	15,123	-	2,094	17,217	
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,199	1,771,599	108,892	427,383	1,094,366	10,306	3,446,745	
Ավելացում	-	-	-	125,310	-	-	125,310	
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,199	1,771,599	108,892	552,693	1,094,366	10,306	3,572,054	
<b>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</b>								
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	-	(553,435)	(71,228)	(372,176)	-	(6,800)	(1,003,639)	
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(88,370)	(9,454)	(13,508)	-	(1,178)	(112,511)	
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(641,805)	(80,682)	(385,684)	-	(7,978)	(1,116,149)	
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(88,324)	(9,454)	(14,506)	-	(591)	(112,875)	
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(730,129)	(90,136)	(400,190)	-	(8,569)	(1,229,024)	
<b>Հաշվեկշռային արժեք</b>								
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	34,199	1,218,164	37,664	40,084	1,094,366	1,412	2,425,889	
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,199	1,129,794	28,210	41,699	1,094,366	2,327	2,330,595	
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,199	1,041,470	18,756	152,503	1,094,366	1,736	2,343,030	



2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 313,161 սկզբնական արժեքով հիմնական միջոցներ ունեն զրո հաշվեկշռային արժեք (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 313,041 հազար դրամ):

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝ ինքնարժեքին 20,257 հազար դրամ (2021թ.՝ 112,511 հազար դրամ), վարչական ծախսերին 88,727 հազար դրամ (2021թ.՝ 0):

13 Հետաձգված հարկային ակտիվ

Հազար դրամ	2022թ.	2021թ. (վերահաշ- վարկված)
Տարեսկզբի մնացորդ	50	(3,976)
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 10)	3,712	4,026
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	-	-
Տարեվերջի մնացորդ	3,762	50

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2022թ. հունվարի 1	Այլ համա- պարփակ ֆինան- սական արդյունք- ներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապար- փակ ֆինանսա- կան արդյունք- ների մասին հաշվետ- վությունում ճանաչված	2022թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Ծագուցազործված արձակուրդային պահուստ	3,088	-	674	3,762
Վարկեր և փոխառություններ	16,077	-	3,038	19,115
	19,165	-	3,712	22,877
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	19,115	-	-	19,115
	19,115	-	-	19,115
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	50	-	3,712	3,762



14 Պաշարներ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	112,943	109,021
Պատրաստի արտադրանք	132,156	137,620
Ապրանքներ	-	16
Անավարտ արտադրանք	25,689	34,764
Վառելիք	4,705	2,569
Պահեստամասեր	332,055	156,983
Այլ պաշարներ	13,151	13,115
	620,699	454,088
Պաշարների արժեքի նվազեցում մինչև իրացման զուտ արժեք	(109,495)	(109,495)
	511,204	344,593

Ընկերությունը պաշարների ինքնարժեքը հաշվառում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» քանաձևով:

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 229,704 հազար դրամ (2021թ.՝ 106,524 հազար դրամ), որը ներառում է պաշարների արժեզրկումը մինչև իրացման զուտ արժեք:

Ակնկալվում է, որ 511,204 հազար դրամ արժողությամբ պաշարները (2021թ.՝ 344,593 հազար դրամ) կփոխհատուցվեն ավելի քան տասներկու ամսվա ընթացքում:

Ընկերության պաշարները գրավադրված չեն:

15 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ.	2021թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	67,873	303
Տրված կանխավճարներ	805,855	136
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեից	5,282	7,739
Այլ դեբիտորական պարտքեր	2,897	587
	881,907	8,765

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խեղամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 1 օր (2021թ.-ին՝ 1 օր):

Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ չի առաջանում, քանի որ կազմակերպության մատուցված ծառայությունները ֆինանսավորվում են պետության կողմից, իսկ օժանդակ վճարովի ծառայությունները մատուցվում են վճարման անորոշագրի հիման վրա, վճարման պահին:



16 Գրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	156	88
Բանկային հաշիվներ	1,046	-
	<b>1,202</b>	<b>88</b>

17 Կապիտալ և պահուստներ

17.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնեմասերի քանակը

Հայտարարված բաժնեմասեր 89,515 հատ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով	2022թ.	2021թ.
	89,515,000	89,515,000

Բաժնետեր	2022թ.		2021թ.	
	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)
ՀՀ Պաշտպանության նախարարություն	71,612	80.000	71,612	80.000
Յուրի Հակոբյան Արշակի Մուսաննա Հարությունյան	34	0.038	34	0.038
Վասիլի	31	0.035	31	0.035
Լևոն Մամիկոնյան Մամիկոնի	30	0.034	30	0.034
Ռոբերտ Սարգսյան Գուրգենի	30	0.034	30	0.034
Մաքսիմ Հարությունյան Գեղամի	30	0.034	30	0.034
Այլ բաժնետերեր (քանակը՝ 1,301)	17,748	19.827	17,748	19.827
	<b>89,515</b>	<b>100.000</b>	<b>89,515</b>	<b>100.000</b>

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետիրական կապիտալը կազմել է՝ 89,515 հազար դրամ:

Բաժնետեր	2021-2022թթ.	
	Բաժնետոմսերի քանակ	Բաժնեմասի չափը (%)
1-5	71,737	80.140
6-10	146	0.160
11-1307 (1297)	17,632	19.700
	<b>89,515</b>	<b>100.000</b>



Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընկերության սովորական բաժնետոմսերի բաժնետերերին վերագրելի զուտ վնաս՝ բազային վնասի հաշվարկի համար	(187,821)	(163,976)
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի գծով տոկոսներ	-	-
Ընկերության սովորական բաժնետոմսերի բաժնետերերին վերագրելի զուտ վնաս՝ ճշգրտված նուսրացման ազդեցությունով	(187,821)	(163,976)
	2022թ.	2021թ.
Սնկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային վնասը հաշվարկելու նպատակով սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակ	89,515	89,515
Նուսրացման ազդեցությունը	-	-
Բաժնետոմսերի օպցիոններ	-	-
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր	-	-
Սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակ՝ ճշգրտված նուսրացման ազդեցությունով	89,515	89,515

17.2 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջացել է հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում: Ընկերության հիմնական միջոցները վերջին անգամ վերագնահատվել են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Վերագնահատված հիմնական միջոցների օտարման ժամանակ դրանց գծով վերագնահատման պահուստը հաշվեգրվում է ուղղակիորեն կուտակված շահույթին կամ վնասին:

18 Ստացված վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ապահովված վարկեր</i>				
<i>Ընդհանրապես ստացված արժեքով հաշվարկված</i>				
ՀՀ ֆինանսական հաստատություններից ստացված վարկեր	65,000	36,186	-	-
	65,000	36,186	-	-
<i>Չապահովված փոխառություններ</i>				
<i>Իրական արժեքով հաշվարկված</i>				
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	118,000	59,500	-	101,123
	118,000	59,500	-	101,123
	183,000	95,686	-	101,123



**Վարկերի և փոխառությունների իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատությունը ներկայացված է ստորև.**

Հազար դրամ	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չապահովված վարկեր և փոխառություններ - Անորոշիկացված արժեքով հաշվարկված - ՀՀ ֆինանսական հաստատություններից ստացված վարկեր	65,000	36,186	65,000	36,186
	65,000	36,186	65,000	36,186
<i>Չապահովված փոխառություններ</i>				
<i>Իրական արժեքով հաշվարկված</i>				
- կապակցված կողմերից ստացված փոխառություններ	118,000	160,623	118,000	177,500
	118,000	160,623	118,000	177,500
	183,000	196,808	183,000	213,686

Ընկերությունը ՀՀ ֆինանսական կազմակերպությունից ստացել է օվերդրաֆտ երեք տարի ժամկետով, տարեկան 13% տոկոսադրույքով:

Ընկերությունը կապակցված կողմերից ստացել է անտոկոս փոխառություններ 1-ից 9 ամիս ժամկետով և անտոկոս փոխառություն հիմնադրից 13 տարի ժամկետով.

**19 Հետաձգված եկամուտ**

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ոչ ընթացիկ</i>		
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	225,758	109,783
	225,758	109,783
<i>Ընթացիկ</i>		
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	100,919	192,295
	100,919	192,295
	326,677	302,078



20 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ.	2021թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	60,357	7,822
Ստացված կանխավճարներ	1,207,625	53,162
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	52,373	28,895
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	331	152
	<b>1,320,686</b>	<b>90,031</b>

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 32 օր (2021թ.՝ 5 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են քոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

21 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

21.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հաշվապահական գնահատումները հիմնականում վերաբերվում են հիմնական միջոցների օգտակար ծառայությունների ժամկետներին:

21.2 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2020թ. առաջին կիսամյակում նոր կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի արագ տարածումը խիստ ազդեցություն է ունեցել ամբողջ աշխարհի գրեթե քոլոր պետությունների տնտեսությունների վրա: Մյ շարք երկրներ, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, ձեռնարկել են միջոցառումներ, որոնք էական ազդեցություն են ունեցել ոլորտների մասնակիցների գործունեության վրա: COVID-19 պատճառով քաղաքիվ երկրներում, ներառյալ Հայաստանի Հանրապետությունում, բիզնեսները ստիպված են եղել անոթոշ ժամկետով դադարեցնել կամ սահմանափակել գործունեությունը: Վիրուսի տարածման դեմ ուղղված միջոցառումները, հանգեցրել են բիզնեսի էական խափանումների, հանգեցնելով տնտեսական անի տեմպերի նվազման, ինչպես երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության ՀՆԱ-ի կրճատման:

Հիմնադրամն այս համաճարակը գնահատում է որպես հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող շճզրտվող իրադարձություն, որի ազդեցության քանակական գնահատումը Հիմնադրամի վրա գործնականորեն հնարավոր չէ իրականացնել քաղաքաք ճշգրտությամբ:

Ներկայումս Հիմնադրամի ղեկավարությունը վերլուծում է տնտեսական պայմանների փոփոխության հնարավոր ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական վիճակի և գործունեության վրա:



22 Ֆինանսական գործիքներ

22.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

22.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

*Ֆինանսական ակտիվներ*

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	70,770	890
Դրամական միջոցներ և համարժեքներ	1,202	88
	<b>71,972</b>	<b>978</b>

*Ֆինանսական պարտավորություններ*

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.		
Վարկեր և փոխառություններ	183,000	196,808
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	60,357	7,822
	<b>243,357</b>	<b>204,630</b>

23 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

23.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

*ա) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար



առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2022թ.	2021թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ.		
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր.		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	70,770	890
Դրամական միջոցներ և համարժեքներ	1,202	88
	<b>71,972</b>	<b>978</b>

Հաշվետու ամսաքվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

**բ) Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով քարծր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Ընկերություն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը:

**23.2 Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով: Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա) հետևյալ կերպ.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր վարկեր և փոխառություններ	183,000	196,808
Համաձայն դրամական միջոցներ և համարժեքներ	1,202	88
Զուտ պարտավորություն	181,798	196,721
Ընդհանուր կապիտալ	1,890,214	2,078,035
	<b>2,072,012</b>	<b>2,274,756</b>
Ֆինանսական լծակ	<b>9%</b>	<b>9%</b>



23.3 Ֆինանսական դրության մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները և իրական արժեքի հիերարխիա

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Ըճկերության որոշ ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով: Ըճկերության ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի չափման համապատասխան գնահատման տեխնիկա:

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	70,770	70,770	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,202	1,202	-	-
	71,972	71,972	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	183,000	183,000	-	-
Ընդամենը	243,357	243,357	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	890	890	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	88	88	-	-
	978	978	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	196,808	95,686	101,123	-
Ընդամենը	204,630	103,508	101,123	-



Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման մպատակով Շնկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- **1-ին մակարդակ**՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (շճզգրտված),
- **2-րդ մակարդակ**՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- **3-րդ մակարդակ**՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, քացառությամբ որոշ կետերի և ֆինանսական գործիքների, որոնք, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, չափվել են վերագնահատված արժեքով կամ իրական արժեքով, ինչպես ներկայացված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

#### 24 Պայմանականություններ

##### 24.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում քացակայուն են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև տարածաշրջանի տնտեսական ճգնաժամը: Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների համոյեալ անվճարումակությունը, խաբարված հեղինակությունը, վաճառքների, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված՝ Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանրահոմբային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Եուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի



վատրարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, Ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա տարածաշրջանային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

#### 24.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի անբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երբորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

#### 24.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

#### 24.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Ընկերությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Ընկերությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը քավարարում է շրջակա միջավայրի հետ կապված կառավարության սրահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները սպառազայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:



25 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության բաժնետերեր և հիմնական ղեկավար անձնակազմը: Ընկերության վերջնական վերահսկողն է Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարարության, որին պատկանում է Ընկերության բաժնեմասերի 80%-ը:

25.1 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	21,914	24,929
	21,914	24,929

Պարենյանի նաստրաշինական գործարանի և  
 Ընկերության հաշվետվություններ  
 2022թ. դեկտեմբերի 31